

4.4. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

4.4.1. Սոցիալական ոլորտ

Վիճակագրական դիտարկման փաստաթղթերում միջազգային և եվրոպական չափանիշների և դասակարգիչների ներդրման, ինչպես նաև վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջարկի ուսումնասիրության հիման վրա վիճակագրական նոր ցուցանիշների արտացոլման նպատակով վերանայվել են սոցիալական ոլորտի վիճակագրական դիտարկման բոլոր փաստաթղթերը:

Համապատասխան տեղեկատվական բազաների ամբողջականացման և/կամ համալրման նպատակով հաշվետու ժամանակահատվածում, պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին իրականացվել է 5 հետազոտություն.

1. «Սահմանամերձ և բարձր լեռնային գոտիներում տարրական կրթահամակարգում երեխաների ընդգրկվածության և չհաճախելու պատճառների հետազոտություն» (2004թ.), որի նպատակն էր սահմանամերձ և բարձր լեռնային գոտիներում տարրական կրթահամակարգում աշակերտների ընդգրկվածության, դասերից բացակայելու պատճառների, կրթության որակի, աշակերտների բարոյահոգեբանական վիճակի, զբաղվածության հիմնահարցերի ուսումնասիրությունը:
2. «Մանկատներում հանգստի կազմակերպման պայմանների հետազոտություն» (2004թ.), որի նպատակն էր սոցիալական խոցելի խմբերից մեկի՝ մանկատներում բնակվող խնամյալների հանգստի կազմակերպման պայմանների, բարոյահոգեբանական վիճակի, զբաղվածության հիմնահարցերի ուսումնասիրությունը:
3. «Տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններում հանգստի կազմակերպման պայմանների հետազոտություն» (2004թ.), որի նպատակն էր տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններում բնակվող խնամյալների հանգստի կազմակերպման պայմանների, բարոյահոգեբանական վիճակի, զբաղվածության հիմնահարցերի ուսումնասիրությունը:
4. «Սահմանամերձ և բարձր լեռնային գոտիներում հիմնական կրթահամակարգում երեխաների ընդգրկվածության և չհաճախելու պատճառների հետազոտություն» (2005թ.), որի նպատակն էր սահմանամերձ և բարձր լեռնային գոտիներում հիմնական կրթահամակարգում աշակերտների ընդգրկվածության, դասերից բացակայելու պատճառների, կրթության որակի, աշակերտների բարոյահոգեբանական վիճակի, զբաղվածության հիմնահարցերի ուսումնասիրությունը:
5. «Սահմանամերձ և բարձր լեռնային գոտիներում ավագ դպրոցներում երեխաների ընդգրկվածության և չհաճախելու պատճառների հետազոտություն» (2006թ.), որի նպատակն էր սահմանամերձ և բարձր լեռնային գոտիների ավագ դպրոցներում աշակերտների ընդգրկվածության, դասերից բացակայելու պատճառների, կրթության որակի, աշակերտների բարոյահոգեբանական վիճակի, զբաղվածության հիմնահարցերի ուսումնասիրությունը:

Բազմաբնակարան շենքերի վերականգնողական աշխատանքների և դրանց արդյունքում վերականգնված բնակարանային ֆոնդի վիճակագրական տեղեկատվության ապահովման նպատակով 2005թ. դեկտեմբեր ամսին անց է կացվել միանվագ հաշվառում՝ Երևանի քաղաքապետարանից և մարզպետարաններից համապատասխան տեղեկատվության հավաքագրման միջոցով:

Բնակարանային ֆոնդի և բնակության պայմանների վերաբերյալ տեղեկատվական բազաների ամբողջականացման և համալրման նպատակով 2004թ. ներդրվել են բնակարանային ֆոնդի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման վիճակագրական դիտարկման նոր փաստաթղթեր:

Քաղաքային բնակավայրերի բարեկարգվածության հաշվառման կատարելագործման նպատակով քաղաքների ճանապարհային տնտեսությանը վերաբերող թվով երկու պետական վիճակագրական հաշվետվությունների ձևեր միավորվել են մեկ՝ «Քաղաքների ճանապարհային տնտեսության մասին» պետական վիճակագրական հաշվետվության ձևում:

Վարչական ռեգիստրների ներդրման և շարունակական կատարելագործման նկատառումներով պայմանավորված, համապատասխան վարչական վիճակագրություն իրականացնող մարմինների հետ համագործակցության արդյունքում ներդրվել են «Անշարժ գույքի օտարման մասին» (Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե), «Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների գործունեության մասին» (Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն), «Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին» (Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության) վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերը: Առողջապահության ոլորտում Հիվանդությունների միջազգային դասակարգման 10-րդ վերանայման (ՀՄԴ-10) ներդրմամբ պայմանավորված, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հետ համատեղ աշխատանքի արդյունքում, ամբողջությամբ վերանայվել են առողջապահության ոլորտին առնչվող վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևերում ներառված ցուցանիշներն ու դրանց համակազմը: Ընթացքի մեջ են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (նախադպրոցական կրթության վարչական վիճակագրության ներդրման) և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի հետ՝ վարչական ռեգիստրների ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Յուրաքանչյուր տարի հրատարակվել է.

1. «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը» վիճակագրական ժողովածուն, որն արտացոլում է կրթության, գիտության, առողջապահության, սոցիալական ապահովագրության և ապահովության, գրադարանների գործունեության, մշակույթի, արխիվային գործի, նոտարական գործունեության, արտոնագրման, ստանդարտացման, չափագիտության ու սերտիֆիկացման, իրավական ոլորտի վերաբերյալ ընթացիկ տարվա քանակական բնութագրիչները, ինչպես նաև որոշ ցուցանիշների նախորդ տարիների դինամիկ շարքերը:

2. «Հայաստանի Հանրապետության բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը» վիճակագրական ժողովածուն, որն արտացոլում է բնակարանային ֆոնդի, անշարժ գույքի շուկայի, համայնքների ջրամատակարարման, կոյուղացման, գազաֆիկացման, ջերմամատակարարման, քաղաքային բնակավայրերի սանիտարական մաքրման, քաղաքային հողերի և կանաչապատ տարածքների վերաբերյալ ընթացիկ տարվա քանակական բնութագրիչները, ինչպես նաև որոշ ցուցանիշների նախորդ տարիների դինամիկ շարքերը:

4.4.2. Բնապահպանություն

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են բնապահպանական վիճակագրության կատարելագործման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, որոնք ուղղորդված են եղել մի կողմից՝ համապատասխան ոլորտի վարչական վիճակագրության կատարելագործմանը (վարչական ռեգիստրների ներդրման ու կայացման համատեքստում), մյուս կողմից՝ պաշտոնական վիճակագրության շրջանակում հավաքագրվող ցուցանիշների համախմբի ընդլայնմանը (այդ թվում՝ մարզային տեղեկատվական բազաների վարման աշխատանքների կատարելագործման միջոցով): Ընթացքի մեջ են նաև ազգային հաշիվների համակարգում բնապահպանական հաշիվների ներդրման աշխատանքները:

Շարունակվել է համագործակցությունը Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության հետ՝ բնապահպանական ներդրումների և ծախսերի հաշվառման վարչական վիճակագրական հաշվետվության ձևի մշակման (գտնվում է փորձարկման փուլում), ջերմոցային գազերի հաշվառման ռեգիստրի ներդրման ու վարման, ինչպես նաև շարժական աղբյուրներից արտանետումների հաշվառման մեխանիզմների կատարելագործման ուղղություններով: Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հետ համատեղ մշակվել և համապատասխան վարչական ռեգիստրում ներդրվել է շրջակա միջավայրի հիգիենայի ցուցանիշների հաշվառման մեխանիզմներն ու մեթոդաբանությունը: Շարունակվում են առողջապահության էկոլոգիական բնութագրիչների (ցուցանիշների) հաշվառման աշխատանքները: Վարչական վիճակագրություն իրականացնող մարմինների հետ համատեղ աշխատանքների արդյունքում մշակվել են համապատասխան նորմատիվային փաստաթղթեր, ճշգրտվել է վիճակագրական տեղեկություններ տրամադրողների շրջանակը, ներդրվել են համապատասխան դասակարգիչները, ինչպես նաև համատեղ կազմվել տեղեկագրեր:

Բնապահպանական ոլորտի տեղեկատվական բազայի տվյալների համալրման նպատակով Շվեդիայի վիճակագրության կենտրոնական բյուրոյի մեթոդաբանական օժանդակությամբ և Շվեդական միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ 2004թ. իրականացվել է «Կազմակերպությունների բնապահպանական ծախսերի ընտրանքային հետազոտություն», որի նպատակն էր ուսումնասիրել կազմակերպությունների կողմից կատարված բնապահպանական ներդրումների և ընթացիկ ծախսերի կազմն ու կառուցվածքը, բնապահպանական նշանակության արտադրանքի ծավալը, կազմակերպությունների կողմից կատարված բնօգտագործման և բնապահպանական վճարները, բնապահպանական հիմնական և շրջանառու միջոցների առկայությունը, առկա խոչընդոտները և բնապահպանական ծախսերի հաշվառման

առնչվող այլ ցուցանիշներ: Հետազոտության արդյունքներով հրապարակվել է զեկույց՝ հայերեն:

Շարունակվել են նաև վիճակագրական հրապարակումներում աշխարհագրական տեղեկատվական համակարգի ներդրման, էկոլոգիական ատլասների կազմման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Յուրաքանչյուր տարի հրապարակել է «Բնական պաշարները և շրջակա միջավայրը Հայաստանի Հանրապետությունում» վիճակագրական ժողովածուն, որն արտացոլում է հիդրոօդերևութաբանական պայմանների, անտառային տնտեսության և բնության հատուկ պահպանվող տարածքների, երկրաբանահետախուզական աշխատանքների, պահպանության կարիք ունեցող հողերի, մթնոլորտային արտանետումների, ջրօգտագործման և ջրահեռացման, թափոնների շարժի, բնապահպանական և բնօգտագործման վճարների, բնապահպանական ընթացիկ ծախսերի, շրջակա միջավայրի մոնիթորինգի, բնապահպանական իրավախախտումների, արտակարգ իրավիճակների և այլնի վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը (այդ թվում՝ քարտեզային ներկայացմամբ և դինամիկ շարքերի տեսքով):

4.4.3. Տնային տնտեսությունների հետազոտություններ

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտությունները: Համաշխարհային բանկի աջակցությամբ մշակվել և 2004թ.-ից ներդրվել է սպառման ագրեգատի՝ մասշտաբից տնտեսման մեթոդաբանությունը, որի առնչությամբ պարբերաբար վերանայվել է նաև տնային տնտեսությունների հետազոտությունների գործիքակազմը՝ հարցաթերթերն ու դրանց լրացման հրահանգները:

Համաշխարհային բանկի տեխնիկական օժանդակությամբ իրականացվող «Աղքատության մոնիթորինգ» ծրագրի շրջանակում տնային տնտեսությունների ընտրանքի չափը 2004թ. համար, մեկ տարվա կտրվածքով կազմել է 6816 (2003թ.՝ 4644-ի դիմաց): 2005թ. ապրիլի 1-ից սկսած՝ տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտությունն իրականացվել է պետական բյուջեի միջոցների հաշվին և 2005-2006թթ. համար կազմել համապատասխանաբար՝ 5187 և 5184 տնային տնտեսություն (տնային տնտեսությունների ամսական ռոտացիայի սկզբունքով): Ընտրանքի նման համամասնությունները հնարավորություն են ընձեռել ապահովել բնակչության աղքատությունը և կենսամակարդակը բնութագրող հիմնական ցուցանիշների՝ մարզային կտրվածքով հաշվարկման համար անհրաժեշտ նվազագույն ներկայացուցչականությունը:

Շվեդիայի վիճակագրության կենտրոնական բյուրոյի մեթոդաբանական օժանդակությամբ և Շվեդական միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ 2004թ. հուլիսի 1-ից մինչև 31-ն իրականացվել է ժամանակի օգտագործման փորձնական ընտրանքային հետազոտություն, որի նպատակն էր ուսումնասիրել արդյունավետ գործունեության համար (վճարվող և չվճարվող աշխատանք, ուսում) ժամանակի օգտագործումը, ազատ ժամանակի առկայությունը և օգտագործումը, ժամանակի օգտագործման գենդերային և մի շարք այլ բնույթի հարցեր: Հետազոտության արդյունքներով հրապարակվել է զեկույց՝ հայերեն և անգլերեն:

Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող, Ամերիկայի Միացյալ Նահանգների «ՕԱՆՄԻ» Մակրո կազմակերպության տեխնիկական աջակցությամբ, Հայաստանում Միավորված ազգերի կազմակերպության Մանկական հիմնադրամի ու Բնակչության հիմնադրամի Հայաստանյան գրասենյակների տեխնիկական և կազմակերպական աջակցությամբ 2005թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին՝ Ծառայության և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից համատեղ իրականացվել է Ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն, որի նպատակն էր ծնելիության, մոր, մանկան և չափահասների առողջության, ՁԻԱՀ-ի և սեռական ճանապարհով փոխանցվող այլ հիվանդությունների մասին տեղեկատվության հավաքագրումն ու ուսումնասիրությունը: Ընտրանքի չափը կազմել է 7565 տնային տնտեսություն, ինչը հնարավորություն է տվել որոշ ցուցանիշներ ներկայացնել նաև մարզային կտրվածքով: Հետազոտությամբ հավաքագրված տեղեկատվության մեծ մասն արտացոլում է 2000թ. իրականացված համանման առաջին հետազոտությամբ ստացված հիմնական առողջապահական և ժողովրդագրական ցուցանիշների արդիականացված տարբերակը: Հետազոտության նախնական արդյունքներով հրապարակվել է զեկույց՝ հայերեն և անգլերեն:

Տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտության հարցաթերթի համապատասխան հարցերի վերանայման և փոփոխման միջոցով, շարունակաբար կատարելագործվել է աղքատության ոչ նյութական ցուցանիշների (կրթություն, առողջապահություն, անվտանգ խմելու ջրի մատչելիություն և բնակարանային պայմաններ) համախումբը: Մասնավորապես, 2005 թվականից, հետազոտությունների հարցաթերթին կից հատուկ մոդուլներով՝ աշխատուժի ընտրանքային հետազոտության անհատական (մոդուլային) հարցաթերթով իրականացվել է աղքատության խորացված գնահատումը: 2006թ. հունիսին տնային տնտեսություններում իրականացված «Առողջապահության մոդուլ» փորձնական հետազոտության արդյունքում (ընտրանքի չափը՝ 1296 տնային տնտեսություն), ամբողջությամբ վերանայվել է տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաթերթի «Առողջություն և առողջապահություն» բաժինը՝ համապատասխանեցնելով նշված մոդուլին:

Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է նաև Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի մոնիթորինգի համար անհրաժեշտ՝ աղքատության նյութական և ոչ նյութական ցուցանիշների շարունակական ամփոփումն ու հրապարակումը:

4.4.4. Պարենային ապահովություն

Պարենային ապահովության վիճակագրության վարման աշխատանքները խարսխվել են Եռամյա ծրագրով սահմանված դրույթներին և ուղղորդված են եղել Հայաստանի Հանրապետության կառավարության և Եվրոպական հանձնաժողովի միջև Եվրոպական հանձնաժողովի՝ 2003 և 2005-2006թթ. «Պարենային ապահովության ծրագրի» Փոխըմբռնման հուշագրերով սահմանված նախապայմանների իրագործման ապահովմանը:

Միավորված ազգերի կազմակերպության Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության ու Եվրոպական հանձնաժողովի կողմից հավանության արժանացած

մեթոդաբանության համաձայն, հաշվետու ժամանակահատվածում կազմվել են առանձին ապրանքախմբերի ազգային պարենային հաշվեկշիռները՝ 2003-2005թթ. համար: Հաշվի առնելով միջազգային կազմակերպությունների փորձագետների և վիճակագրական տեղեկատվության սպառողների առաջարկությունները, վերանայվել և համալրվել է «Պարենային ապահովություն և աղքատություն» եռամսյակային վիճակագրական տեղեկագրի կառուցվածքն ու բովանդակությունը, բացի սոցիալ-տնտեսական հիմնական ցուցանիշների, գների և դրանց ինդեքսների, պարենի առկայության, մատչելիության և օգտագործման վերաբերյալ տեղեկություններից (բաժիններից), սկսած 2006թ. ներառելով նաև տեղեկատվություն՝ անտառապահպանության, անտառապաշտպանության և անտառվերականգնման միջոցառումների, անասնաբուժության, բույսերի պաշտպանության, հողերի բարելավման և երեխաների խնամքի ու պաշտպանության միջոցառումների վերաբերյալ:

2004թ. և 2005թ. իրականացվել են Միավորված ազգերի կազմակերպության Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից ստեղծված պարենային ապահովության ոլորտի տվյալների բազայի համար տեղեկատվության հավաքագրման, ստուգման, ծածկագրման և վերոհիշյալ կազմակերպության www.fsdatabase.org, իսկ 2006թ.ից նաև՝ <http://www.fao.org/giews/workstation/page.jsp> ինտերնետային էջերում մուտքագրման աշխատանքները:

4.4.5. Ժողովրդագրություն

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են հանրապետության գյուղական բնակչության սեռա-տարիքային կազմի հաշվառման աշխատանքները՝ համապատասխան պետական վիճակագրական հաշվետվության ձևի միջոցով: Գյուղական բոլոր համայնքներից (870) հավաքագրված տվյալների հիման վրա ամփոփվել են այդ գյուղական համայնքների տնային տնտեսությունների քանակի (ընդամենը և առկա), մշտական, առկա և երկարատև բացակայող բնակչության թվաքանակի, ինչպես նաև առկա բնակչության կառուցվածքի՝ ըստ առանձին տարիքների և տարիքային խմբերի, տնային տնտեսությունների՝ գյուղատնտեսական և այլ ոլորտներում զբաղված անդամների թվաքանակի վերաբերյալ ցուցանիշները՝ յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի դրությամբ: Հաշվետվությունների տվյալների ամփոփման արդյունքներով պատրաստվել է նաև հանրապետության գյուղական համայնքների (բնակավայրերի) ցանկն ըստ մարզերի և բնակչության թվաքանակի:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժիններից ամսական պարբերականությամբ ստացված՝ ծննդյան, մահվան, ամուսնության, ամուսնալուծության ակտերի մշակման արդյունքում ստացվել են ամենամսյա օպերատիվ ցուցանիշներ՝ հանրապետության մարզերի և տարածաշրջանների կտրվածքով, իսկ տարեկան պարբերականությամբ՝ բնակչության բնական շարժը բնութագրող մանրամասնեցված ցուցանիշներ: 2004թ. հունվարի 1-ից սկսած՝ քաղաքացիական կացության գրանցման մահվան ակտերից՝ մահացության պատճառական կառուցվածքի վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության մշակումն իրականացվել է ըստ Հիվանդությունների

միջազգային դասակարգման 10-րդ վերանայման (ՀՄԳ-10), ինչով պայմանավորված «Բնակչության բնական շարժը» համալիրի մուտքագրման կառուցվածքում կատարվել են փոփոխություններ՝ Հիվանդությունների միջազգային դասակարգման 9-րդ վերանայումից համապատասխան անցումներն ապահովելու համար:

Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային անձնագրային բաժիններից ստացված Եկողի և Մեկնողի հասցեաթերթիկների վիճակագրական մշակման արդյունքում ստացվել են միգրացիոն տեղաշարժերի վերաբերյալ եռամսյակային օպերատիվ ցուցանիշներ և բնակչության միգրացիոն տեղաշարժերը բնութագրող մանրամասնեցված տարեկան վիճակագրական ցուցանիշներ:

Բնական շարժի ամսական և մեխանիկական շարժը բնութագրող եռամսյակային օպերատիվ ցուցանիշների հիման վրա, տարեկան և եռամսյակային պարբերականությամբ, արդիականացվել են հանրապետության մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշներն՝ ըստ մարզերի, տարածաշրջանների և քաղաքային ու գյուղական բնակավայրերի:

Միջազգայնորեն ընդունված մեթոդաբանության համաձայն՝ իրականացվել է միջմարդահամարային տարիների՝ 1989-2001թթ. ժողովրդագրական ցուցանիշների վերահաշվարկ (բնակչության թվաքանակի քաղաքային և գյուղական ու սեռա-տարիքային բաշխվածությամբ), որի հիման վրա վերագնահատվել են ծնելիության և մահացության ընդհանուր ու տարիքային կտրվածքով ներկայացվող բոլոր հիմնական ցուցանիշները: Վերահաշվարկված տվյալներն արտացոլվել են «Ժողովրդագրական իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում, 2004թ.» վիճակագրական զեկույցում և «Ժողովրդագրական ժողովածու-2004թ.» վիճակագրական ժողովածուում: Բացի այդ, 2004թ.-ից, Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի արդյունքների հիման վրա և բնական շարժի ու միգրացիայի ընթացիկ հաշվառման արդյունքներով, սկսած 2002թ. տարեկազմից, տարեկան պարբերականությամբ իրականացվել է մարզերի մշտական բնակչության սեռատարիքային կազմի հաշվարկ՝ քաղաքային և գյուղական կտրվածքով:

Հաշվետու ժամանակահատվածում վերանայվել և լրամշակվել են նաև գյուղական համայնքներում տնային տնտեսությունների հաշվառման համար հիմք հանդիսացող՝ համայնքների գրքերի կազմն ու բովանդակությունը, լրացման մեթոդական ցուցումները, ինչպես նաև դրա հենքի վրա գյուղական բնակչության սեռա-տարիքային կազմի մասին պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը:

Ծառայությունը մասնակցել է նաև «Բնակչության և զարգացման ռազմավարական ծրագրի» իրականացման հարցերով ստեղծված խմբի աշխատանքներին և խմբի աշխատանքների արդյունքում «Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակը և պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգը» մշակելու աշխատանքներին:

Յուրաքանչյուր տարի հրապարակել է «Ժողովրդագրական ժողովածու» վիճակագրական ժողովածուն, որը ներառում է բնակչության թվաքանակի, բնական շարժի, ամուսնությունների ու ամուսնալուծությունների և ժողովրդագրական այլ ցուցանիշների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը (այդ թվում՝ դինամիկ շարքերի տեսքով):